

դահոյքը գեանդուած է գետինը սփռեալ գորգի մը վրայ⁽³⁹⁾։ Ուրիշ մանրանկար մը ժՁ դարէն, ցոյց կու տայ (Գրիգորիս Աղթամարցիին վերադրեալ) եկեղեցաշէն հայ իշխան մը ակնոցի մը վրայ նստած, «Իսկ ակնոցի եւ ոտքերի տակ գորգ փռած» է⁽⁴⁰⁾։ Ազնուական հայուն տան իբր կահ կարասի գորգը գործածուած կը գտնենք է դարուն իսկ։ Ազունից Ջուանշիր իշխանը դաւաճանօրէն սպաննող իշխանին հօրը տունը, Արցախունեաց դաւառին մէջ, աւարի կը տրուի Ջուանշիրի վրէժխնդիր հեռեւօղաներէն։ Անկից առնուած կողոպուտին մէջ կը յիշուին նաեւ «զոյնազոյն կապերտս»⁽⁴¹⁾։ Ազունից աշխարհը, որ յետոյ անուանուեցաւ Շիրվանի եւ Շամախի մահմետական իշխանութիւն, պահեց իր գորգի արտադրութեան եւ գործածութեան համբաւը։ 1561ին մեղի կը նկարագրուի երկրին Ապտուլա Խանին վրանը, գետինը «ծածկուած էր ճոխ գորգերով, եւ իր ներքեւ սփռուած էր քառակուսի գորգ մը հիւսուած ոսկիով եւ արծաթով, որուն վրայ գեանդուած էին երկու յարմար բարձեր»⁽⁴²⁾։ Իսկ Իպն Պաթուիթա ժԳ դարուն կը վրկայէ որ Անտալիայի Շէյխի մը բնակարանը այցելած ատեն «մենք ինքզինքնին գտանք լաւ շէնքի մը մէջ կապերտուած գեղեցիկ թրքական գորգերով»⁽⁴³⁾։ Այսպէս՝ թէ՛ Կովկասի եւ թէ՛ արեւմտեան Փոքր Ասիոյ մէջ գորգ կը գործածուէր ազնուականութեան կողմէ, ուրեմն աներկբայաբար է որ այդ երկու կէտերուն մէջ տարածուող Հայաստանի մէջ ալ գորգը կը վայելէր նոյն այդ արժէքը⁽⁴⁴⁾։

Պանդուխտ հայութիւնը գորգը կը գործածէր իբր ատանին զըլխաւոր կահ։ 1637ին Adam Olearius Սպահանի մէջ խնձորով մը կը հիւրասիրուի Նոր Ջուղայեցի մեծատուն Սաֆրազէն։ Այս նշանաւոր հայուն խնձորի սրահը զարդարուած էր, եւ «գետինը ծածկուած էր ճոխ գորգերով, որուն վրայ սփռուած էին ծաղկեղիզիպակայ բազմոցներ»⁽⁴⁵⁾։

(39) Վախտանգ որդի Ումէկայ եւ նորա Տոհմը։ - Գարեգին Արքեպոս. Յովսէփեան։ Սիոն, 1932, թիւ 124-ն սկսեալ։ Խնդրոյ նիւթ նկարը անդ, էջ 394, 397, ոչ յաջող։

(40) Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին։ - Գարեգին Արք. Յովսէփեան։ Հանդ. ամս. 1930, էջ 58, նկար թիւ 5 (էջմիածնի ձեռագիր թիւ 969, էջ 80ր.։ Նկարները ոչ յաջող։

(41) Պատ. Ազունից. Մով. Կողանկատուացի, Թիֆլիս, 1913, էջ 357։

(42) Hakluyt's Voyages, 1927, Vol. II, էջ 14։ Դարձեալ 1563ին նոյն Խանին վրանին «գետինը ծածկուած էր գորգերով»։ (Անդ, էջ 31)։

(43) Selections from... Ibn Batuta. — H. A. R. Gibb, 1929, New York, p. 126.

(44) Այս երկու կէտերէն դատ Հայաստանի հարաւային երկրներուն մասին ալ վիպագրութիւններ ունինք։ Tavernier Նինուէէն Սպահան ուղեւորութեան ժամանակ ճամբան ջեղապետի մը վրանը կ'այցելէ «որ սփռուած էր Պարսկական գորգերով»։ (Collection of Travels, London, 1684, հատ. Ա, էջ 75)։ Դարձեալ ընդդիմէր հրամանատարին վրանին մօտեցած ատեն «ան բարձրացաւ իր մեծ, մետաքսեայ գորգէն, եւ մեզ բարեկեց»։ (Անդ, էջ 74)։ Իսկ Նինուէի Մուլէյման Խանին բնակարանը նկարագրած ատեն «մենք զինքը գտանք պարսկերէն վրայ նստող ճեմեղիքին մէջ, գետինը սփռուած էին ոսկի եւ մետաքս գորգեր, եւ ոսկեղիզիպէ մեծ բարձեր պատին մօտ շարուած»։ (Անդ, էջ 75)։

(45) The Voyages and Travels. — London, 1669, էջ 205։ Չանց ըրած եմ Պարսից արքունեաց կամ ազնուականաց պալատներուն մէջ գործածուած գորգերու մասին եղած վիպագրութիւնները, նախ որ անոնք բազմաթիւ են եւ երկրորդ՝ որ կը վերաբերին ժՁ դարու վերջին շրջանին, որով շատ անգամ մեր նիւթին համար